24-ՐԴ ՆԻՍՏ

8 հոկտեմբերի, երեկոյան, 1918թ.

Նախագահում է *Ա. Սահակյանը,* ներկա են ներքին գործոց և ֆինանսների մինիստրները: Նախագահը կարդում է օրակարգը.

1. Կառավարությանը վարկ բաց անելու օրինագծի Գ ընթերցումը.
2. Գաղթական որբերի խնամատարության օրինագծի Ա ընթերցումը.
3. Պարենավորման հանձնաժողովի շաբաթական զեկուցումը.
4. Բժշկասանիտարական հանձնաժողովի զեկուցման շարունակությունը.
5. Քաղաքի հողերը կապալով տալու օրինագծի Բ ընթերցումը.
6. Ջուլհակային աշխատանքի նախահաշվի վերջնական հաստատումը.
7. Գլխավոր հաշվետեսի ընտրությունը.
8. Ընթացիկ գործեր:

Կարդացվում է կառավարությանը վարկ բաց անելու օրինագիծը՝ ֆինանսական հանձնաժողովի արած ուղղումներով: Տաք վեճ է առաջանում անկուսակցականների, սոց. դեմ[ոկրատների], էսեռական, ժող. կուս[ակցության] ֆրակցիաների ներկայացուցիչների և դաշնակցական ֆրակցիայի ու ֆինանսների մինիստրի միջև, գլխավորապես այն խնդրի վերաբերմամբ, թե կառավարությանը տրվելիք գումարը պիտի սահմանափակվի՞ քանակով ու ժամանակով, թե՞ ոչ: Խորհրդարանի տրամադրությունն աչքի առաջ ունենալով, մինիստրը հետ է վերցնում օրինագիծը և դրանով վերջ տրվում վիճաբանությանը:

Գ. Տեր-Խաչատրյան - Կարդում է գաղթական որբերի խնամատարության օրինագիծը, որ հանձնված էր խորհրդարանի կողմից օրենսդրական, դպրոցական և գաղթականական հանձնաժողովների քննության:

Ս. Մամիկոնյան - Գաղթականական ու որբանոցային գործը նոր չէ հայերիս համար: Դեռ [19]15թ. տաճկահայ որբերի համար մեզնում բացվել են որբանոցներ. բաց էր անում հասարակությունը, իսկ կառավարությունը (ռուս.) տալիս էր պետական նպաստ: Այժմ կտրվել է պետական նպաստը, դրսից էլ նվիրատվություններ չեն ստացվում: Մի խոսքով, չկան նախկին աղբյուրներն ու հնարավորությունները: Միակ միջոցը մնում է այն, որ մեր կառավարությունը իր վրա վերցնի ամբողջ ծանրությունը:

Կան մոտավորապես 12.000 որբեր, որից 7.000-ը տաճկահայեր են: Մեր սրբազան պարտականությունը պիտի լինի պահել դրանց, քանի որ այդ մի սուրբ ավանդ է բազմաթիվ նահատակ ծնողների: Անհրաժեշտ է պահել գեթ իբրև նմուշ շատ վայրերում ոչնչացած մեր ժողովրդի:

Այնուհետև նա առաջարկում է դուրսը գտնվող որբանոցներին նպաստ տալ, թողնել տեղում և ոչ թե բերել Երևան ու նորանոր դժվարություններ ստեղծել պարենավորման տեսակետից: Որբանոցային գործի կազմակերպությունը պետք է հանձնել գաղթականական մինիստրին:

Ա. Խոնդկարյան - Շեշտում է այն հանգամանքը, որ մինչև օրս որբերին խնամելու քայլեր չեն արված: Որբերը բոլորովին անխնամ վիճակի մեջ են, ինչպես, օրինակ՝ էջմիածնի որբերը: Օրինագծի մեջ պիտի մատնացույց արվի սիստեմը և որբանոցային մեխանիզմը:

Պիտի լինի մի պաշտոնյա, որ հսկի Հայաստանի բոլոր որբանոցներին, որից յուրաքանչյուրը պիտի ունենա իր կառավարիչը-պաշտոնյան: Պիտի լինի և պետական կոնտրոլ:

Որբանոցները հիմնվում են Հայաստանի բոլոր որբերի համար, առանց ազգի և կրոնի խտրության: 15 տարեկանից մեծ երեխաների համար պիտի ընդունել պատրոնատի սկզբունքը:

Մի քանիսի կողմից լինում են թեթև բացատրություններ ու լրացումներ, ապա օրինագիծը դրվում է քվեարկության, անցնում է և հանձնվում խմբագրական հանձնաժողովին:

Դ. Ջուբյան - Կարդում է ջուլհականոցներ բաց անելու օրինագիծը և նախահաշիվը, ըստ որի ծախս պիտի լինի մեկուկես միլիոն: Երրորդ ընթերցումով ընդունվեց Խորհրդարանի կողմից ու հանձնվեց խմբագրական հանձնաժողովին:

Կարդացվեց քաղաքի հողերը կապալով տալու օրինագիծը, ընդունվեց ու հանձնվեց խմբագր[ական] հանձնաժողովին:

Պետական հաշվետեսի պաշտոնի համար բոլոր ֆրակցիաներն էլ առաջարկեցին Հայաստանի Խորհրդարանի պատգամավոր Ստ. Մամիկոնյանի թեկնածությունը: Վերջինս հրաժարվեց, այդ իսկ պատճառով ընտրությունը հետաձգվեց:

Նիստը վերջացավ երեկ[ոյան] ժ. 11-ին:

«Զանգ», 16 հոկտեմբերի 1918թ.